«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 48)

ք. Երևան 24.10.2017թ.

ՔԱՂՎԱԾՔ
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ

23.10.2017թ. N 1132-Ա «ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՈՐՈՇՈՒՄԻՑ

Քննարկելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության 23.10.2017թ. «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» որոշումը, հիմք ընդունելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Կանոնադրության 3.2 կետը և «Խորհրդի գործունեության կանոնակարգի» 5.2 կետի 15) ենթակետը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու հետևյալ պայմանները.
   1) Թողարկել արժեկտրոնային պարտատոմսեր 17,200,000 (տասնյոթ միլիոն երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 172,000 հատ, 36 ամիս մարման ժամկետով, տարեկան 7.50 տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:
      Առաջնային տեղաբաշխումն իրականացնել 2017թ. նոյեմբեր - 2017թ. դեկտեմբեր ամիսների ընթացքում, մինչև 2017թ. դեկտեմբերի 25-ը:
   2) Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի սահմանված քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաբաշխման գործընթացը:
   3) Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշվեհամարներին:
   4) Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման առաջին օրվանից հաշվարկված 36 ամիս անց:
   5) Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:
2. ………………..
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Խորհրդի նախագահ՝ /ստորագրություն/ Վ. Գրիգորյանց

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ստեփանյան